600.0379.09.10.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հոկտեմբերի 2019 թվականի №379Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի №199Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի №235Ն որոշումը և հաշվի առնելով «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի սեպտեմբերի 25-ի №MH/L190726/1.0/RY գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 24-ի «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը կարճ կոդով ծառայությունների համարի զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №199Ա որոշման՝
   1) վերնագրում «ծառայությունների համարի» բառերը փոխարինել «և «0800» կոդով անվճար զանգահարվող ծառայությունների համարների» բառերով,
   2) 1-ին կետում և 2-րդ կետով հաստատված հավելվածի 5-րդ կետում «համարը» բառը փոխարինել «, «8506-8525 և «0800» կոդով անվճար զանգահարվող ծառայությունների (ֆրի ֆոն) 03000-ից մինչև 03019 համարները» բառերով,
   3) 2-րդ կետում և դրանով հաստատված հավելվածի վերնագրում «ծառայությունների «8161» համարի» բառերը փոխարինել «և «0800» կոդով անվճար զանգահարվող (ֆրի ֆոն) ծառայությունների համարների» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ԱՂԻՆՅԱՆ

ք.Երևան
9 հոկտեմբերի 2019թ.